

## Կ Ի Պ Ր Ա Հ Ա Յ Ք Ր Ո Ն Ի Կ

Մեծն թրիտանիո պատկանյալ Կիպրոս կղզին մեջ կապրին շուրջ 4000 հայր, ուրունք իրենց հայրենասիրությամբ ու եկեղեցափառությամբ ծանոթ են բոլոր հայ դպրություն։

Միջին դարերում, երբ դրացի Կիլիկիո մեջ գոյություն ուներ Հայկական թագավորություն մը, ամբողջ 295 տարիներ (1080-1375), ստեղ Կիպրոս կայցելելին կաթողիկոսներ, եպիսկոպոսներ, վարդապետներ ու քահանաներ, Զանազան առիթներով Կիպրոս այցելած էին նույնիսկ հայ թագավորություն ու իշխաններ, որովհետև Կիլիկիո վերջին 4 հայ թագավորները խնամիական կապ հաստատած էին Կիպրոսի Գրանսիսացի արքայական «Առաստինյան» տան հետ, նույնիսկ Կիպրոս կղզին հայկական թագավորության տվավ արքաներ, որոնց վերջինն էր Առողջ. Լուուինյան (1374-1375), որ եղավ Հայ Ազգին վերջին թագավորը, Անոր վախճանումն վերջ, որ տեղի ունեցավ 1393 թվականին, Բարիզի մեջ, Կիպրոսի թագավորները մինչև 1489 թվականը անվանապես կոչվեցան «Հայաստանի քաջավորներ»։ Հասկանալի է, անշուշտ, որ «Հայաստան» այստեղ կնշանակե «Կիլիկիա»։

Մինչև 15-րդ դարը Կիպրոսը ուներ եղիութիսկոպոսական թեմ ու մի քանի հայագյուղեր։ Եկեղեցական առաջին կազմակերպության կենտրոնն էր, Ֆամակուտա քաղաքին հայոց «Կանչուոր Սուրբ Աստվածածին» վանքը, ուր Ներսես Լամբրոնացի այցելած էր Հոնարեն լեզուն սորվելու համար։ Այս վանքին կիսավեր եկեղեցին այժմ հայոց տրվեցավ ու մոտ ատենին պիտի բարեկարգվի։

Այժմ Կիպրոսի թեմը չունի իր առաջնորդը, Գլխավոր եկեղեցին նիկոսիո «Սուրբ Աստվածածին» եկեղեցին է, որ նախապես լատինական տաճար մըն էր, ու կկոչվեր „Notre dame de Tige“։ Կիպրոսի մյուս գլխավոր քաղաքներեն՝ Լարնաքայի ու Լիմասոլի մեջ գոյություն ունեն եկեղեցիներ։ Խաշակիր երկու քահանա հայեր, այժմ կ պաշտոնավարեն Կիպրոսի մեջ։ Մին նիկոսիա, որուն հոգևոր հովիվն է Արժ. Տեր Խորեն Ա. քահանա Գուպիլյան, իսկ երկրորդը լարնաքա, որուն հոգևոր Հովիվն է, Արժ. Տեր Գրիգոր Պետրոսյան, Երկու քահանաները բարեկարատ քարոզիչներ են «Հայ եկեղեցվոր սկզբնավորությունը և հայ վանականությունը», «Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմությունը Աշոտ Ա.-ի և Սմբատ Ա.-ի օրոք»։

Կպատկանի Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության) անհրաժեշտորեն պետք ունի եպիսկոպոս առաջնորդի մը, շատ մը պատճառներով։ Թեմին վերջին առաջնորդը եղած էր Պետրոս Սարացյան Սրբազնար, որ վերջին եղած էր կաթողիկոս Տանն Կիլիկիո։

Նիկոսիային քիչ մը հեռու կպտնվին «Մելքոնյան կրթական հաստատության» հոյակապ շենքերը։ Այս կարևոր հաստատության վերջին ընդհանուր տնորենը եղած է Տոքտ. Հակոբ Թոփճյան, որ սեպտեմբեր 15-ին (1945) Կիբանան մեկնեցավ, ինչպես որ կիմանանք Ն. Ս. Օ. Կիլիկիո վեհափառ Գարեգին Ա. կաթողիկոսին հրավերին վրա։

Տոքտ. Հ. Թոփճյան, ջրչանավարտ եղած էր էջմիածնի Գեւազյան ձեմարաննեն, ուր Խրիմյան Հայրիկը ու ուսուցիչները մեծապես գնահատած էին զինք, իբր մին այն բազմաթիվ ուսումնատիպ երիտասարդներն, որոնք գիտության ծարավի ըլլալով փութացած էին եվրոպական քաղաքակրթության ուստանները։ Իր մասնադիտական բարձրագույն ուսումը շարունակելու համար գնաց Գերմանիա (1899-1904) ու Հալեի հոչակավոր համալսարանին մեջ ուսանեցավ փիլիսոփայություն, պատմություն, մանկավարժական գիտություն, լեզվաբանություն ու նույնիսկ աստվածաբանություն։ նույն համալսարաննեն ստացավ, «Տոքտոր փիլիսոփայության» ու «Մագիստրոս Գեղեցիկ դպրությանց» տիտղոսները։ Տոքտ. Հ. Թոփճյան աշխատակցած է բազում հայերեն պարբերաթերթերու, սկսելով էջմիածնա «Արարատ»-են ու Թիֆլիսի «Արձագանք» հռուր դարձ թերթերն, Աշխատակցած է նաև գերմանական թերթերուն ու միշտ լույս ընծայած է պատմագիտական հրաշալիքներ։ Ունի գերմաններեն լեզվով գրված մասնավոր ուսումնասիրություններ ու գրքեր։ Ասոնցմեն կարևորներն են «Հայ եկեղեցվոր սկզբնավորությունը և հայ վանականությունը», «Հայաստանի քաղաքական և եկեղեցական պատմությունը Աշոտ Ա.-ի և Սմբատ Ա.-ի օրոք»։

Տոքտ. Հ. Թոփճյան, Կիպրոսի «Մելքոնյան կրթական հաստատություն» ծառայած է ուժը տարիներ, ու իր օրերուն, հաստատությունը բարձրացած է երկրորդական վարժարանի։